Քննարկվել և հաստատվել է
Խորհրդի 24.02.2025թ. __02__ նիստում

Խորհրդի նախագահ՝ Ա. Եսայան

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի 2024 թվականի գործունեության վերաբերյալ

2024թ. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է առկա ձևով, 1 հերթափոխով, շաբաթական 36 դասաժամով:
Ուսումնարանում սահմանված է 5-օրյա աշխատանքային շաբաթ:
2024-2025 ուսումնական տարում ուսումնարան են ընդունվել 117 ուսանող՝ հիմնական կրթության հիմքով, որից 109-ը՝ անվճար հիմունքներով, 8-ը՝ վճարովի հիմունքներով:
2024 թվականին ուսումնարանում ուսուցանվել են «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի», «Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» և փորձարարական կարգով՝ «Խոհարարական գործ՝ խոհարար» /դուալ կրթական համակարգ/, «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ», «Կահույքի արտադրության տեխնոլոգիա՝ կահույքագործ» «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա՝ կարող՝ կաշվե իրերի» և «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում՝ էլեկտրիկ՝ ավտոմեքենաների ծրագրային արատորոշման և սպասարկման» մասնագիտությունները:
Հաստատությունում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիմնվելով ՄԿՈԻ օրենքի, ուսումնական հաստատության կանոնադրության, կրթության զարգացման պետական ծրագրի, ուսումնական հաստատության զարգացման ծրագրի, պետական կրթական չափորոշիչների կիրառման, ուսումնական պլանով նախատեսված ուսումնական գործընթացի ժամանակացույցի, կրթության իրավունքի, կրթական ծրագրերի յուրացման ապահովման և այլ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:
Համապատասխան կարգերի համաձայն՝ հաստատությունում կազմակերպվել է ուսանողների ընդունելության, փոխադրման և շրջանավարտների ավարտման գործընթացները:
Որակավորման հանձնաժողովների հաշվետվությունները ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն, եզրակացություններն ու առաջարկությունները քննարկվել են մասնագիտական մեթոդմիավորման, մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդի նիստերում:

Դասախոսները դասավանդել են լիարժեք պատրաստված՝ օգտագործելով տարբեր հարթակներ, գործիքներ, տեսադասեր, տեսանյութեր, վիրտուալ լաբորատորիաներ և այլ միջոցներ, իսկ գործնական, արտադրական ուսուցման դասաժամերն ու արտադրական պրակտիկաները անցկացվել են հիմնովին վերանորոգված և վերազինված մասնագիտական արհեստանոցներում և համապատասխան գործատու կազմակերպություններում:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ուսուցանվող մասնագիտությունների բոլոր մոդուլների համար մշակվել և վերանայվել են ուսումնառության և դասավանդման նյութեր: Ուսումնական գործունեության ապահովման համար առկա են անհրաժեշտ տեղեկատվական նյութեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և ուսումնադիդակտիկ պարագաներ: Ուսումնարանի գույքը, լաբորատոր սարքավորումները, տեխնիկական միջոցները, սարքերը, գործիքները բավարար քանակությամբ են:

«Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում ներդրված է երկակի /դուալ/ ուսուցման համակարգ: 2024 թվականին 59 ուսանող Գյումրի քաղաքի հասարակական սննդի ոլորտի կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա ուսումնական պլանով նախատեսված գործնական դասաժամերը անցկացրել են համագործակցող թվով 16 մասնավոր կազմակերպությունների խոհանոցներում:

Նաև գործատուների մոտ շաբաթական մեկ օր կազմակերպվել է գործնական ուսուցում «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Կահույքի արտադրության տեխնոլոգիա», «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտական կուրսերի ուսանողների համար:

Արտադրական պրակտիկաներն ըստ ժամանակացույցի կազմակերպվել են համապատասխան մասնագիտական կազմակերպություններում: Ուսանողների ցուցաբերած գիտելիքների և կարողությունների արդյունքում ուսումնարանը ստացել է բազմաթիվ շնորհակալական նամակներ համագործակցող կազմակերպություններից:

Տարբեր մասնագիտությունների գծով ուսումնարանի հետ համագործակցող մասնավոր կազմակերպությունների թիվը կազմում է 82, 2024թ. ակտիվ համագործակցողների թիվը՝ 43: Ուսումնարանը նաև համագործակցում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հետ:

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատությունում ուսանողների թիվը կազմել է 236, դեկտեմբերի 30-ի դրությամբ՝ 264:

73 շրջանավարտ ստացել է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ, որից 12-ը՝ գերազանցության:

2024թ. շրջանավարտներից 29-ը զորակոչվել է ազգային բանակ, որից 2-ը ըստ մասնագիտության /խոհարար/, 23-ը ընդունվել է աշխատանքի՝ մասնագիտությամբ 8-ը, բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվել են 6 ուսանող, որից 2-ը՝ մասնագիտությամբ: Նախորդ երեք տարիների շրջանավարտներից 2024թ. ընթացքում աշխատանքի են տեղավորվել ևս 32-ը:

Սովորողներից 2024թ. ընթացքում ազգային բանակ զորակոչվել են՝ 3-ը, 4-ը հեռացվել է, 4-ը մեկնել է արտերկիր, վերականգնվել է պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած 1 ուսանողի ուսանողական իրավունքը:

2024 թվականի առաջին կիսամյակում կրթաթոշակ է տրամադրվել ուսումնական հաստատության գերազանց և լավ առաջադիմություն ունեցող երկրորդ կուրսերի թվով 29 ուսանողի, երրորդ կուրսերի՝ 75 ուսանողի:

2024-2025 ուստարվա առաջին կուրսեցիներից կրթաթոշակ է տրամադրվել << կառավարության կողմից հաստատված առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտությունների ցանկում ներառված «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում»

մասնագիտության առաջին կուրսի 20 ուսանողներ, որոնցից մեկը՝ գերազանցության, իսկ երրորդ կուրսերից 37 ուսանողի:

Ուսումնարանի աշխատակիցների թիվը 2024թ. դեկտեմբեր 28-ին կազմել է 55 /ներառյալ հղիության և ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող 2 անձ/, որից 35 մանկավարժ ընդգրկված են մանկավարժական խորհրդի կազմում: Դասախոսներից 31-ը ունի բարձրագույն կրթություն /1-ը գիտության թեկնածու/, 4-ը՝ միջին մասնագիտական:

Մրցույթային կարգով համալրվել են «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Կահույքի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների և դասախոսների, մաթեմատիկա, անգլերեն, ֆիզիկա առարկաների թափուր տեղերը:
2024թ. ավարտին թափուր է մնացել «Ոսկերչություն» մասնագիտության վարպետի հաստիքը:

2024թ-ի ընթացքում ուսումնարանի կառավարման խորհուրդը անցկացրել է թվով 6 հերթական և 4 արտահերթ նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել են ուսումնարանի ուսումնադաստիարակչական, ընդունելության հայտերի կազմման, պետական ավարտական և որակավորման քննությունների, դուալ ուսուցման համակարգի, փորձարարական կարգով ներդրված ծրագրերի ընթացքի, ընդունելության արդյունքների, թափուր աշխատատեղերի, ուսումնարանի ծախսերի, Ֆինանսական հաշվետվությունների, վճարովի համակարգ ընդունված ուսանողների զեղչերի կիրառման, բյուջեի և արտաբյուջեի ծախսերի ուղղությունների որոշման մասին քննարկումներ, ֆինանսական ու նյութատեխնիկական բազայի ապահովման և ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքային հարցեր: Կատարվել է քննարկումներ ուսումնարանի 2021-2026թթ. զարգացման ծրագրից 2024թ. ընթացքում նախատեսված և կատարված աշխատանքների վերլուծության, 2023-2024 ուստարվա ներքին գնահատման, ուսման որակի բարձրացմանն ուղղված ներքին կարգերի ու ընթացակարգերի, տնօրենի տարեկան հաշվետվությունների վերաբերյալ:
Ուսումնարանում գործող ուսանողական և ծնողական խորհուրդները, համաձայն իրենց գործունեության կարգի, ակտիվ մասնակցել են հաստատության կազմակերպչական աշխատանքներին՝ կազմակերպել ժողովներ, հանդիպումներ, միջոցառումներ: Ծնողական խորհուրդը անցկացրել է 4 նիստ, ուսանողական խորհուրդը՝ 6, քննարկվել է կազմակերպչական, կարգապահական հարցեր, իրականացրել՝ ուսանողների առօրյան բազմաբովանդակ դարձնելու և ուսումնարանի միջազգայնացման վերաբերյալ քննարկումներ:
Հումանիտար, բնագիտամաթեմատիկական և մասնագիտական մեթոդական միավորումները, համաձայն իրենց աշխատանքային պլանի, անցկացրել են ամենամսյա նիստեր, իրականացրել ժամաբաշխում, առարկայական դասալսումներ, դրվածքի ուսումնասիրություններ, քննարկումներ, ուսման որակի բարձրացման առաջարկներ, կատարված աշխատանքների արդյունքների վերլուծություններ և այլ աշխատանքներ:
Տարվա ընթացքում իրականացվել են սովորողների դաստիարակչական աշխատանքներ, հետևողական աշխատանք է տարվել ուսանողների վարքը ուղղելու, դասապրոցեսին ներգրավվելու, բացակայությունների հաշվառման և կանխման ուղղությամբ, կատարվել են տնային այցեր, կազմակերպվել ծնողական ժողովներ, հանդիպումներ բացակայող և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների ծնողների հետ, անհրաժեշտության դեպքում տրվել է աջակցություն և տարվել բացատրական աշխատանքներ: Ուսումնարանը համագործակցել է ՀՀ ոստիկանության անչափահասների և ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության

բաժինների հետ՝ կրթությունից խուսափող ուսանողներին կրթական գործընթաց վերադարձնելու նպատակով:
Ուսումնարանում ստեղծվել են նպաստավոր պայմաններ ազատ ժամանցի կազմակերպման միջոցով ապահովելու ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, վարքի շեղումների կանխարգելումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական, ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները:
Ուսումնարանում բացի նախատեսված կրթադաստիարակչական միջոցառումներից, իրականացվել են լրացուցիչ տարատեսակ միջոցառումներ և ծրագրեր:

Ուսումնական և կազմակերպադաստիարակչական աշխատանքների բարելավման նպատակով մշակվել են ներքոնշյալ կարգերը, որոնք քննարկվել և հաստատվել են են Խորհրդի կողմից.

1. «Դասալսումների կազմակերպման, անցկացման եվ գնահատման» կանոնակարգ
2. «Առաջին կուրսի ուսանողների շրջանում իրականացված հարցման» ընթացակարգ
3. «Բենչմարքինգի իրականացման քաղաքականության» ընթացակարգ
4. «Դասախոսների և վարպետների կարիքների գնահատմանն և մասնագիտական զարգացմանն ուղղված» ընթացակարգ
5. «Սկսնակ դասախոսների մենթորության» ընթացակարգ
6. «Փորձարարական ծրագրերի արդյունավետության գնահատման» ընթացակարգ:

Կատարվել են հարցումներ՝ «Ուսումնարանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման» կանոնակարգի համաձայն, վերլուծվել են արդյունքները, քննարկվել և կիրառվել են համապատասխան միջոցներ բացթողումների շտկման և գործընթացի բարելավման համար: Ինչպես նաև հարցումներ են կատարվել գործատուների և ծնողների շրջանակում՝ «Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության հարցում-գնահատման» և «Ուսումնարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ծնողների հարցման», «Կարիերայի ուղղորդման կենտրոնի կատարած աշխատանքների արդյունավետության վերաբերյալ հարցման» կարգերի համաձայն:
Կազմակերպվել են սեմինարներ՝ մանկավարժների մասնագիտական գիտելիքների և թվային գրագիտության բարձրացման, նոր մեթոդների ներդրման և ստեղծագործական աշխատանքի զարգացման նպատակով: Խորհրդատվական և մենթորական աշխատանքներ են տարվել սկսնակ մանկավարժների հետ: Անցկացվել են դասալսումներ, բաց դասեր, իրականացվել են մասնագիտական մոդուլների, առարկաների դրվածքի ուսումնասիրություններ, որոնք նպաստել են թերությունների շտկմանն ու վերացմանը:
Կատարվել է 2023-2024 ուսումնական տարվա գործունեության ներքին գնահատում հանձնաժողովի կողմից, որի մեջ ներգրավվել են ուսումնարանի վարչական աշխատողներ, մեթոդմիավորման նախագահներ, կառավարման խորհրդի, գործատու կազմակակերպության, մանկավարժական և ուսանողական համակազմից անդամներ: Ներքին գնահատումը քննարկվել է մանկավարժական և Կոլեգիալ կառավարման խորհուրդների նիստերում:
Հաշվապահական, ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, սահմանված կարգով, ժամանակին կազմվել, քննարկվել են կառավարման խորհրդում և ներկայացվել համապատասխան մարմիններին:

Հաստատության ֆինանսական գործունեությունն իրականացվել է Խորհրդի կողմից հաստատված նախահաշիվների և գնումների պլանների համաձայն:

Ուսումնարանում ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Դաստիարակչական աշխատանքների շնորհիվ ազգային բանակ զորակոչված ուսանողներն աչքի են ընկել մարտական ու զինվորական կարգապահությամբ, օրինակելի ծառայությամբ:

Զինվորական ծառայության մեջ գտնվող բազմաթիվ ուսանողներ 2024 թվականի ընթացքում պաշտպանության նախարարության և զորամասերի հրամանատարության կողմից ստացել են խրախուսանքներ:

Ուսումնարանում գործում է կարերիայի կենտրոն, որի աշխատանքի արդյունքում ընդլայնվել է համագործակցող գործատու կազմակերպությունների շրջանակը:

2024 թվականի ընթացքում Կարիերայի ուղղորդման կենտրոնը իրականացրել է 52 սեմինար, 8 այցելություն գործատու կառույցներ:

Իրականացվել է հաստատության զարգացման ծրագրով 2024 թվականին նախատեսված հետևյալ աշխատանքները.

- *կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերանայում՝ արդի կրթության չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխանեցնելու նպատակով.*

- յուրաքանչյուր տարի մասնագիտական կուրսերի վարպետների և կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի կողմից իրականացվել են աշխատաշուկայի ուսումնասիրություններ, հարցումներ են կատարվել ՄՄԾ-ներին, գործատուներին, որի արդյունքում ուսումնական հաստատությունում փորձարարական կարգով ներդրվել են նաև «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա՝ կարող՝ կաշվե իրերի» և «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում՝ Էլեկտրիկ՝ ավտոմեքենաների ծրագրային արատորոշման և սպասարկման» մասնագիտությունները: Ուսումնական հաստատությունը նշյալ մասնագիտությունների գծով համագործակցում է մարզում առաջատար կաշվե իրերի արտադրող «ՊՈԳՈ» և «Տավրոս» ՍՊԸ-ների և ավտոմեքենաների ծրագրային արատորոշում իրականացնող խոշոր արհեստանոցների հետ: Ուսանողները իրենց արտադրական ուսուցումը և պրակտիկան անցկացնում են գործատուների մոտ՝ օգտագործելով նաև գործատուի նորարարական տեխնիկական և նյութական ռեսուրսները
- կրթական ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի ապահովմանն անհրաժեշտ կարողությունների բարձրացման նպատակով, իրականացվել են հարցումներ և կատարվել վերլուծություն գործատու կազմակերպությունների բավարարվածության վերաբերյալ՝ ուսումնարանի շրջանավարտներից և կրթական ծրագրերից: Ուսումնական տարվա ընթացքում պահպանվել է կապը գործատուների և վարպետ-դասախոսների միջև առավել արդյունավետ ուսուցում կազմակերպելու նպատակով:

- *Որակի ներքին և արտաքին ապահովման համակարգը կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան բարելավում.*

- ուսումնարանում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կազմվում է ներքին գնահատման հանձնաժողով և իրականացվում հաստատության գործունեության ներքին գնահատում՝ կատարված աշխատանքների վերլուծություն
- ուսումնական հաստատությունը 2023-2024 ուսումնական տարում անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ ՀՀ ԿԳՄՍՆ 29.05.2024թ N 931-Ա/2 հրամանով շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարով
- ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում ուսումնական հաստատությունը վերանայել է ներքին գնահատման չափանիշները՝ ներառելով ինստիտուցիոնալ հավատարմագրման ձևաչափեր, անդրադառնալու ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարողականին

- մշակվել են ուսումնական հաստատության գործունեությունը համակարգող նոր կանոնակարգեր, օրենքների և հրամանագրերի փոփոխություններին համապատասխան լրամշակվել են առկա կանոնակարգերը

- *Ուսանողների և այլ շահառուների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների աջակցմանը, կրթական ծառայությունների կատարելագործմանը միտված կրթությանը օժանդակող լրացուցիչ ծառայություններ մատուցում.*
- ուսումնական հաստատությունում 2024թ. մարտից գործում է «Գաղափարից բիզնես» սոցիալական ձեռնարկությունը, որը ձևավորվել է Սեքյող Կաթոլիք Կարիտաս Ֆրանսիայի և Կարիտաս Իսպանիայի կողմից ֆինանսավորվող «ԱՐԱՄԱԶԴ. ՍՏԶԶ» (Սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացում) ծրագրի շրջանակներում Հայկական Կարիտաս բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Սոցիալական տնտեսության» զարգացման դրամաշնորհային ծրագրերին մասնակցության արդյունքում: Ուսանողներից և շրջանավարտներից կազմվել է աշխատանքային խումբ, նրանց տրամադրվել է առանձնացված տարածք՝ սեփական գիտելիքներն ու կարողությունները ներդնելու, մասնագիտության և ձեռնարկատիրական գործունեության մեջ հմտանալու նպատակով: Ծրագրի շահառուներն են 7 ուսանող՝ Արցախից բռնի տեղահանված՝ 3, որից 1-ը՝ հաշմանդամ, շրջանավարտ- գործազուրկ՝ 1 անձ:

- *Ուսումնարանում հարակից ուսումնառության համակարգի զարգացում.*
- «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի գործուն աջակցությամբ և առաջնորդությամբ 2024թ. հուլիսի 8-ից 22-ը ուսումնարանում իրականացվել է «Դպրոցական խոհարար» մասնագիտության լրացուցիչ կրթական ծրագիրը Շիրակի մարզի դպրոցների խոհարարների համար
- լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում
- ուսումնական հաստատությունը համագործակցում է Շիրակի մարզի ՏՄԱԿ-ի համապատասխան մասնագետների հետ՝ ներառական և շարունակական կրթության մեթոդաբանության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

- *Բարձրորակ դասախոսական կազմ ներգրավելու և շարունակական կատարելագործման հնարավորությունների ընձեռում.*
- իրականացվել է մանկավարժադասախոսական կազմի ուսումնամեթոդական և մասնագիտական վերապատրաստումներ
- հաստատության «Խոհարարական գործ» և «Ոսկերչություն» մասնագիտությամբ դասավանդող 5 դասախոս մասնակցել է վերապատրաստման դասընթացների և ատեստավորման՝ որից 4-ը հավաքել են 90 տոկոսից բարձր միավոր, իսկ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի շրջանավարտ 20-ամյա վարպետը՝ 78,3 տոկոս
- GIZ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Բիզնես և Կրթություն Գործընկերություն», «ՄԿՈՒ-Համագործակցություն Հարավային Կովկասում» կազմակերպությունների համագործակցության շնորհիվ իրականացվել են վարչական և դասախոսական կազմի վերապատրաստումներ
- Մասնակցություն՝ միջազգային կրթական ծրագրերի՝ «Էրազմուս+» , ETF GLAD Network /Եվրոպական վերապատրաստումների հիմանդրամ/ կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումներին և վեբինարներին
- Մասնակցություն՝ միջազգային «Էրազմուս+» ՄԿՈՒ կարողությունների զարգացման REnForce /Վերականգնվող էներգետիկայի ոլորտում աշխատուժի ներուժի ամրապնդում և հզորացում/ ծրագրին:

- *Հաստատության գործունեության հրապարակայնության և թափանցիկության ընդլայնում.*

- «Բաց դռների օր», «Աշխատանքի տոնավաճառ» և «Վարպետաց դասեր» միջոցառումների շարքի կազմակերպում
- Սոցիալական ցանցերում և կայքէջում հաստատության ֆինանսական և այլ գործունեությունների լուսաբանում
- կազմակերպվող աշխատանքներում ծնողների, ուսանողների, ՀԿ-ների և այլ կառույցների ներգրավում

- *Կառավարման արդյունավետության բարձրացում՝ վերահսկող նոր մեխանիզմների ներդրում.*
- Ուսանողական ընկերությունների գործունեության խթանում, ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում, «Գաղափարից բիզնես» սոցիալական ձեռնարկության ստեղծում
- աշխատանքի անվտանգությանն և առողջության ապահովման կրթական գործընթացի բարելավում՝ «Անվտանգության ցուցանակ»-ների պատրաստում
- ուսանողական խորհրդի աշխատանքների ակտիվացում
- շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովում
- դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեխանիզմների և կանոնակարգերի մշակում

Հաստատության շենքային պայմանները բարելավված են , շենքում առկա են հակահրդեհային, ջեռուցման և տեսանկարահանման համակարգեր, վերելակ և խելացի հարմարություններ ներառական կրթություն իրականացնելու համար: «Ընտանիք» ԲՀ և միջազգային՝ ֆրանսիական ԻՕվրը Դողիան կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ հիմնանորոգվել են ուսումնական արհեստանոցները, լաբորատորիաները, ուսումնական խոհանոցն ու ճաշասրահը, իսկ պետության աջակցությամբ՝ վերազինվել են նյութատեխնիկական բազայով:
2024թ. կատարվել են նախապատրաստական աշխատանքներ /ֆինանսավորման, նախագծա-նախահաշվային աշխատանքներ/ հաստատության բակում ձեռնարկատիրական գործունեության համար 400քմ տարածքով արվեստանոցների կառուցման և 105քմ տարածքով հանրակացարանային շենքի կառուցման նպատակով:
Շենքային պայմանների բարելավման աշխատանքները կավարտվեն բուժկետի, ուսումնական զենքի սենյակի ստեղծման և շենքի արտաքին երեսապատումից հետո:
Վերոնշյալ համագործակցության շնորհիվ անապահով ուսանողներին տրամադրվել է ուսման վարձավճարներ և ուսումնական ծախսերի միջոցներ: Նաև 160 անապահով ուսանողների տրվել է հնարավորություն /շուրջ 5 ամիս/ անվճար սնվելու, իսկ խոհարար մասնագիտությամբ սովորողներին՝ գործնական դասերի լիարժեք անցկացում ուսումնական խոհանոցում:

2024 թվականի հունվարից 52 ուսանողների և 3 աշխատակցի տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Ուսումնարանը տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներից զատ մասնակցել է մարզային և հանրապետական միջոցառումների և գրանցել հաջողություններ.

Վերապատրաստումներ
13.02.2024թ. - ՈԱԱԿ՝ փորձագիտական վերապատրաստում /տնօրենի տեղակալ, ուսմասվար/
22-24 մարտ և 19-21 ապրիլ 2024թ. - CODE-SE Սոցիալական ձեռներեցության կենտրոն՝ սոցիալական ձեռնարկատիրության դասընթացավարների դասընթաց /2անձ/
25-29.03.2024թ. - «ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ» տեխնոլոգիական ուսուցման կենտրոն՝ <Electrotech 01> <Ասինխրոն շարժիչների շահագործում> /1 դասախոս/
8-10.04.2024թ. ՄԿՈՒՀԱԿ՝ ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթաց /3 անձ/

15-19.04.2024թ. - «ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ» տեխնոլոգիական ուսուցման կենտրոն՝ ««Robot 00» /1 դասախոս/
16-17.04.2024թ. - ՄԿՈՒՋԱԿ՝ ՄԿՈՒ հաստատությունների «Ձեռներեցություն» մոդուլ դասավանդողների վերապատրաստում /1 դասախոս/
06.05.2024թ. - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ՝ «Վերականգնում հանուն հզորացման» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Դիմակայունության սոցիալական աշխատանք» թեմայով դասընթաց /1 անձ/
07.05.2024թ., *21.06.2024թ* - Շիրակի ՏՄԱԿ՝ «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» թեմայով վերապատրաստում /4անձ/
22-23.07.2024թ. - «Հայկական Կարիտաս»՝ «ԱՐԱՄԱԶԴ. սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացման» ծրագրի շրջանակներում «Մարքեթինգ և բրենդավորում» և «Բնապահպանական և սոցիալական պատասխանատվություն» թեմաներով դասընթաց /2 անձ/
14-16.10.2024թ. - ՄԱԶԾ՝ «ՄԿՈՒ հաստատությունների ռազմավարական կառավարում» թեմայով
23.10.2024թ. - «Ալվան Ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն՝ «Դասավանդողի դերի փոփոխությունը որպես քոչ՝ նախագծահեն ուսումնառության համատեքստում» թեմայով դասընթաց/8 անձ/
06.11.2024թ. - Շիրակի ՏՄԱԿ՝ «Դեռահասների հետ աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները» /2 անձ/
14-16.11.2024թ., 21-23.11.2024թ., 03-05.12. 2024թ. - GIZ՝ «ՄԿՈՒ հաստատությունների ղեկավար կազմի համար ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» /3 անձ/
16.11.2024թ. - «Ալվան Ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն՝ «Հարոտած դեպք, ինֆոգրաֆիկայի կառուցում» թեմյով դասընթաց /5 անձ/
19-22.11.2024թ. - GIZ, «Գերմանական խնայողական բանկերի միջազգային համագործակցության» հիմնադրամ «Միկրոձեռնարկատիրական դասընթաց» դասընթացավարների վերապատրաստում /1 անձ/
25.11.2024թ. - «BIOSEY» ուսումնական կենտրոն՝ «Արմատային և ամբողջական բիոգանգրացում» թեմայով դասընթաց /2 անձ/
09.12.2024թ. - «Սինոփսիս» ընկերություն՝ «Արհեստական բանականության գործիքների կիրառումը դասավանդման մեթոդիկայում» /աշխատակազմ/
11-13.12. 2024թ. - ՄԱԶԾ «Հայաստանի մարզաբնակ երիտասարդների զբաղվածության և տնտեսական հնարավորությունների բացահայտում ծրագրի շրջանակներում» «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամ՝ «Հայաստանի աշխատաշուկայի տեղեկատվության վերլուծություն» թեմայով դասընթաց /1 անձ//
12.12.2024թ. - Շիրակի ՏՄԱԿ՝ «Միջավայրային և խելամիտ հարմարեցումներ» թեմայով դասընթաց /աշխատակազմ/
17.12.2024թ. - «Բիզնես և կրթություն գործընկերություն» ասոցիացիա՝ «Արհեստական բանականության հնարավորությունները» թեմայով վեբինար /4 անձ/
Սեպտեմբեր – դեկտեմբեր 2024թ. - Էմիլի Արեգակ «The InclusEDU Pathways: Empowering Staff for Student Success»՝ ծրագրի շրջանակներում ներառական կրթության վերաբերյալ 4 ամսյա դասընթաց /4 անձ/

Աշխատաժողովներ

26.03.2024թ. - Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ և Վորլդ Վիժն Հայաստանի և Մեդիա նախաձեռնությունների կենտրոն՝ «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրին շրջանակներում կազմակերպված «Հայաստանում ոչ ֆորմալ ուսուցման և քաղաքացիական կրթության գործիքներ» հետազոտությունների ներկայացում /2 անձ/

25-26.04. 2024թ. - «Հայկական Կարիտաս»՝ ԲՀԿ - «Արամազդ. Սոցիալական Տնտեսության և Զբաղվածության Զարգացում» և EcoSE ծրագրերի շրջանակում կազմակերպված «Համայնքը վեր է շահույթից» խորագրով աշխատարան /1 անձ//
17.05.2024թ. - «Ուսումնական հաստատությունների և գործատուների համագործակցության խնդիրներ» թեմայով սեմինար /1 անձ/
22-23.05.2024թ. - Եվրոպական կրթական հիմնադրամ և ՈԱԱԿ՝ <Կարողությունների ձևավորող գնահատման լավագույն փորձ > պանելային քննարկում /2 անձ/
19.09.2024թ. - «Բիզնես և կրթություն ասոցիացիա» ՀԿ՝ <Մենթորություն> թեմայով աշխատաժողով /1 2 անձ/
17.12.2024թ. - ՈԱԱԿ՝ «Գործատուի մասնակցությամբ առարկայական ծրագրի և ուսանողի գնահատման չափանիշների մշակում»

Միջազգային վերապատրաստումներ

23.01.2024թ. - GLAD՝ «Մասնագիտական Գերազանցություն»
07.02.2024թ. - ETF՝ Հաշվետվություն առաջիկայի համար «SELFIE Pilot in Armenia»-ի տարածման առցանց հանդիպում.
20.02.2024թ. - GLAD՝ «GLAD ցանցի առաջնահերթություններ»
21-23.05.2024թ. - Եվրոպական կրթական հիմնադրամ՝ «Աշխատանքին միտված ձևավորող գնահատման որակի ապահովում» ֆորում /3 անձ/
10.06.2024թ. - GLAD՝ «Մեծահասակների ուսուցման դերակատարների կոալիցիաներին. ինչպե՞ս ազդել օրակարգի վրա:
14.06.2024թ. - Էրազմուս+ նախագծերի մեկնարկային օր՝ «Կարողությունների զարգացում ՄԿՈ ոլորտում» պանելային քննարկում /1 անձ/
18.06.2024թ. - ETF ENE GRETA/Building Green՝ «Կանաչ տնտեսության համար կայունության շրջանակներ. առաջ շարժվելով կանաչ անցման համար հմտությունների տրամադրման գործում» առցանց նստաշրջան
16.10.2024թ. - Եվրոպական կիրթական հիմնադրամ՝ «Սոցիալական երկխոսություն և կանաչ անցում՝ 2024 թվականի եռակողմ փոխանակման սեմինարի հետագա քայլեր» /4 անձ/
26.11.2024թ. - Եվրոպական կրթական հիմնադրամ՝ «GLAD առցանց սեմինար ուսուցման կառավարման և դրա շրջանակներում ուսուցման վերաբերյալ»

«Աշխարհի Հմտություններ-Լիոն 2024»

Սեպտեմբերի 10-15-ին «Ոսկերչություն» նմասնագիտության երրորդ կուրսի ուսանող Հակոբ Եշիլբաշյանը Հայաստանի ազգային թիմի կազմում մասնակցեց Ֆրանսիայի Լիոն քաղաքում կայացած «Աշխարհի Հմտություններ» 47-րդ մրցույթին «Ոսկերչություն» հմտություններով:
WorldSkills Lyon 2024 ազգային թիմի մասնակցության լուսանկարները հետևյալ հղումով:
Worldskills Լիոն, Ֆրանսիա 2024 - MKUZAK

Ուսանողները հաստատության կողմից խրախուսվել են լրացուցիչ ծրագրերի մասնակցության համար, նրանք ընդգրկվել են տարբեր մարզաձևերի պարապմունքների և զբաղեցրել պատվավոր տեղեր.

- «Ոսկերչություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող, պարաձանրորդ Խորեն Սուրենի Ծատուրյան.
  - *27.02.2024թ.* - ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շնորհվել է Միջազգային կարգի սպորտի վարպետի մարզական կոչում
  - *09.03. 2024 թ.* - Հայաստանի պաուերլիֆտինգի առաջնություն՝ I պատվավոր տեղ
  - *20.06.2024թ.* - Պարա ծանրամարտի Աշխարհի գավաթի խաղարկություն՝ երկու ոսկե մեդալ

- «Համակարգիչների շահագործում» մասնագիտության II կուրսի ուսանող, «Կիոկուշինկայ» կարատե Վիգեն Ղալաչյան
  - *28.04.2024թ.* - Հայաստանի գավաթի խաղարկություն՝ III պատվավոր տեղ
  - *02.06.2024թ* - Կյոկուշինկայ կարատե ոճի հիմնադիր Մասուտացու Օյամայի 9-րդ միջազգային առաջնություն՝ II պատվավոր տեղ
- «Համակարգիչների շահագործում» մասնագիտությամբ I կուրսի ուսանող **Վլադիմիր Մկրտչյան,**
  - *02.06.2024թ.* - Կյոկուշինկայ կարատե ոճի հիմնադիր Մասուտացու Օյամայի 9-րդ միջազգային առաջնություն՝ I պատվավոր տեղ
- «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության II կուրսի ուսանող Հասմիկ Ղևոնդյան
  - *06.06.2024թ.* -Հայաստանի կարատեի պատանիների, երիտասարդների և Մ21 35-րդ առաջնություն՝ I պատվավոր տեղ

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի հետ համատեղ հուլիս ամսին ուսումնարանում իրականացվել է «Դպրոցական խոհարար» մասնագիտության լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստման 76 դասաժամյա դասընթաց «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» ծրագրի թվով 15 շահառուների համար: Վերապատրաստման դասընթացը վարել է «Խոհարարական գործ» մասնագիտության վարպետ-դասախոս Անի Պետոյանը: Դասընթացի գործնական մասն անցկացվել է ուսումնարանի նյութատեխնիկական բազայով հագեցած ուսումնական խոհանոցում: Ավարտին մասնակից խոհարարները հանձնել են քննություն և ստացել համապատասխան ավարտական վկայական:

ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

Հուլիս-օգոստոս ամիսներին դասախոս Ստեփան Մկրտչյանը ՄԿՈՒԶԱԿ-ի պատվերով հեղինակել է «Կահույքագործություն» ուսումնական ձեռնարկը, որը լույս է ընծայվել և օգտագործվում է ՀՀ ՄԿՈ հաստատությունների կողմից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Շիրակի մարզպետարան
- Գյումրու քաղաքապետարան
- Ֆրանսիական «L'Œuvre d'Orient» կազմակերպություն
- ՄԱԿ-ի զարգացման ծրագիր՝ «Կոլբա լաբ»
- GIZ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
- Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈ)-համագործակցություն Հարավային Կովկասում»

- Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ), «Բիզնես և կրթություն-գործընկերություն» հիմնադրամ
- «Բիզնես և կրթություն ասոցացիա» ՀԿ
- Գերմանիայի Մեկլենբուրգ–Ֆորպոմերանիա Դաշնային տարածաշրջանային էկոնոմիկայի ուսումնական կենտրոն
- RISEBA համալսարան՝ Լատվիա
- «Auto Shkoda» համալսարան՝ Չեխիա
- Green-Tech կազմակերպություն՝ Լատվիա
- IHF asbl կազմակերպություն՝ Բելգիա
- Action Against Hunger (AAH) /Ակցիա ընդդեմ սովի/ միջազգային կազմակերպության
- «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ
- «Ֆերտի» ԲՀԿ , «Միացյալ ազգերի զարգացման ծրագրեր» (ՄԱԶԾ)
- «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ» (ԳԷՀ)
- «Փոքր դրամաշնորհների ծրագր» (ՓԴԾ)
- «Հայկական Կարիտաս» ԲՀԿ
- «ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ
- Գյումրու տեխնոլոգիական կենտրոն
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի /հիմնադրամ/ Գյումրու մասնաճյուղ
- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ
- Նազարովի անվան երկրաֆիզիկայի ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ
- Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն «ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ
- «Մ Ի Ա Ս Ի Ն» բարեգործական հիմնադրամ
- «Բեռլին հյուրերի տուն» ՍՊԸ
- «Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ
- Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն «ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ
- «Երիտասարդական պալատ» համայնքնային ոչ առևտրային կազմակերպություն
- «Նոր լույս» մենթորինգ կենտրոն երիտասարդների համար ՀԿ
- Արհեստ.am
- «GoUp» ընկերություն

Տնօրեն Ք. Ահարոնյան